Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թթ.-ի ռազմավարության 2020-2022 թթ.-ի գործողությունների ծրագրի 2022 թ.-ի կատարողականի հաշվետվություն

N	Ռազմավարության նպատակ	Ցուցանիշ	Կատարման մարմին	Ժամկետ	Հաշվետվություն
1.1.5	Սկսնակ ձեռնարկատեր ծրագրի իրականացում	Շահառուների քանակ	ԷՆ	Շարունակական	ՀՀ կառավարության 355-Լ Որոշմամբ ներդրվել է տնտեսական արդիականացման միջոցառումը, ինչի արդյունքում 500-ից ավել ՓՄՁ-ներ, այդ թվում՝ սկսնակ, ստացել են սարքավորումների ձեռքբերման համար արտոնյալ վարկ: Ներկայումս կառավարության է ներկայացվել ավելի համապարփակ աջակցության գործիք: 2022 թվականին իրականացվել է Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը. - դասընթացներին մասնակցել են 109 դիմումատուներ, - վարկավորում ստացել են 32 շահառու Ներկայումս մշակվել է ՓՄՁ աջակցության նոր, համապարփակ աջակցության ծրագիր՝ 3 բաղադրիչով. - ՓՄՁ ինկուբացիոն ծրագրի ֆինանսավորում - արտոնյալ վարկավորման տրամադրում - ՖԿ-ների հետ ստեղծել հովհանոցային երաշխիքի գործիք
1.1.6	ՓՄՁ վարկերի պորտֆելի հիման վրա ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների խրախուսում, Սփյուռքում դրանց նկատմամբ պահանջարկի հնարավորությունների գնահատում՝		ԷՆ, ԿԲ	Հունիս 2022	ՓՄՁ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկում. Ֆինանսական կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում, եկել ենք այն եզրակացության, որ տվյալ մակրոտնտեսական միջավայրում նման գործիքի ներդրման կարիքը չկա: Սփյուռքի պարտատոմսերի թողարկման համար իրականացվել է ուսումնասիրություն, որով հաստատվել է ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը: Արդյունքները քննարկվել են 2 անգամ ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակում և որոշվել է ստեղծել աշխատանքային խումբ, որը Կառավարությանը կներկայացնի սփյուռքի պարտատոմսերի թողարկման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ
1.3.1	Կրթական և իրազեկման միջոցառումներ		ԷՆ	Շարունակական	2022 թվականին Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվել և իրականացվել է նախարարության համակարգմամբ իրականացվող ծրագրերի հանրային իրազեկման վերաբերյալ միջոցառումների շարքը, որի շրջանակներում օգտագործվել են թե՛ թվային մարքեթինգային գործիքներ, թե՛ ավանդական մարքեթինգային գործիքներ: - Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կազմակերպվել է աշխատանքային հանդիպում, որի շրջանակներում քննարկվել է Արևելյան գործընկերության երկրների ՓՄՁ քաղաքականության 2024 թվականի ինդեքսը: Աշխատանքային այս հանդիպումը պետական մակարդակով առաջին հանդիպումն էր, որի նպատակն էր համախմբել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը նպաստող քաղաքականության մշակման ու իրականացման մասնակիցներին, ինչպես նաև ՏՀԶԿ երկրների քաղաքականությանը մասնակցող և ՀՀ-ում գործունեություն իրականացնող փորձագետներին: 35 մասնակիցներ տարբեր գերատեսչություններից, միջազգային կազմակերպություններից: - 2022 թվականին աշխատանքներ են տարվել 2024 թվականի ՓՄՁ քաղաքականության ինդեքսի (SME Policy Index 2024) մշակմանն ուղղված հարցաթերթի լրացման ուղղությամբ:/ քննարկումներ տարբեր գերատեսչությունների հետ/ - Էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից կազմակերպվել է աշխատաժողով, որի շրջանակներում քննարկվել է Հայաստանում ՓՄՁ-երի թվային փոխակերպման առաջխաղացումը (Advancing the digital transformation of SMEs in Armenia): Էկոնոմիկայի նախարարության համագործակցությամբ ՏՀԶԿ-ն սկսում է նոր նախագիծ, որի նպատակն է Հայաստանում ՓՄՁ-երի թվայնացման խթանումը: Պետություն-մասնավոր աշխատանքային խմբերի հանդիպումների շարքը միտված է Հայաստանում ՓՄՁ-երի թվային փոխակերպման աջակցության քաղաքականության մշակմանը: Մասնակցել են 52 հոգի, տարբեր գերատեսչություններից, միջազգային կազմակերպություններից և տեղական խորհրդատվական կազմակերպություններից, որոնք մասնագիտացված են տնտեսության թվայնացման գործընթացում: - 2022/2023 Korean Sharing Program (KSP) with Armenia ծրագրի շրջանակներում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ՓՄՁ ոլորտի զարգացման նպատակով դեռևս 2022 թվականից սկսել է «Նորարարական բիզնեսների» սերտիֆիկացման համակարգի ներդրման աշխատանքները: Ծրագիրը միտված է մշակելու մոտեցումներ նորարարական ՓՄՁ-երի առանձնացման, դասակարգման և սերտիֆիկացման համակարգի ներդրման համար: Այն հնարավորություն կտա մի քայլ առաջ գնալու և նոր հնարավորություններ բացահայտելու նորարար բիզնեսների համար ներկայանալի և մրցունակ լինել միջազգային շուկաներում՝ սերտիֆիկացված լինելով հանդերձ: Ծրագրի արդյունքում, համատեղ այցելություններ են կատարվել շուրջ 20 նորարարական լուծումներ առաջարկող կազմակերպություններ, արտադրական գործընթացներում նորարարան համակարգեր կիրառող ՓՄՁ-ներ, հանդիպումներ կիրականացվեն շահագրգիռ կազմակերպությունների հետ, որոնք աջակցում են ՓՄՁ-երին՝ նոր ստարտափերի հիմնման գործում: Արտադրական կարողությունների արդիականացման միջոցառման շրջանակներում 10,000 տնտեսվարողների տեղեկատվական հաղորդագրություններ են ուղարկվել, 2 հաջողված պատմություններ են
1.3 .5	ՓՄՁ գնահատման մեթոդաբանության մշակում (օր. Սքորինգ) և ֆինանսական		ԷՆ, ԿԲ	Մարտ 2022	Ֆինանսական կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների հետ 2022 թվականի ընթացքում կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում նախատեսվում է մշակել ՓՄՁ վարկերի ապահովագրության մեթոդաբանություն: Գործընթացը դեռևս իրականացման փուլում է:
1.3.6	Ֆինանսական ոլորտի աշխատակիցների վերապատրաստումներ՝ ՓՄՁ-ների	Կազմակերպված թրեյնինգների/	ԷՆ	Շարունակական	Տնտեսական արդիականացման միջոցառման շրջանակներում ՖԿ-ների հետ մի քանի անգամ տեղի են ունեցել աշխատանքային քննարկումներ, որոնց ընթացքում մանրամասն ներկայացվել է ՓՄՁ վարկավորման և լիզինգի գործիքի կիրառման առանձնահատկությունները:
1.4.2	Անհրաժեշտության դեպքում մշակել ներդրումային ֆոնդերի և բիզնես-հրեշտակների կայացմանը նպաստող օրենսդրական բարեփոխումների փաթեթ	Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների փաթեթը շրջանառվել է	ԷՆ, ԿԲ	Դեկտեմբեր 2022	Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիրը, որը ներկայումս գտնվում է Կարչապետի աշխատակազմ ներկայացնելու փուլում: Ծրագիրը ուղղված է Հայաստանի Հանրապետության կապիտալի շուկային և դեպի տնտեսության իրական հատված ֆինանսավորման հոսքերին նոր լիցք հաղորդելուն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և շրջանառության սպասարկման օժանդակություն և միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման և սպասարկման առաջին 12 ամիսների ծախսերի փոխհատուցում: Մշակման փուլում է գտնվում հրեշտակային ներդրումները խրախուսող հարկային խրախուսման միջոցառում:
1.4.3	Կապիտալում մասնակցությամբ զանգվածային ֆինանսավորման (crowdfunding) ենթաօրենսդրական դաշտի ստեղծում, անհրաժեշտության դեպքում օրենսդրական ակտերի մշակում	Ենթաօրենսդրա-կան (անհրաժեշտու-թյան դեպքում օրենսդրական) փաթեթը շրջանառվել է	ԿԲ, ԷՆ	Մարտ 2022	Կառավարության 2022 թվականի փետրվարի 8-ին թիվ 24-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» որոշումը, որի նպատակն է սահմանել քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների նկատմամբ իրենց գործունեության բնույթին համահունչ պահանջներ և միաժամանակ խրախուսել այս հարթակում թողարկողների և ներդրողների մուտքը՝ ամրագրելով քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման համար հստակ, արդյունավետ և ներդրողների շահերը պաշտպանող պահանջներ:
1.4.5	Այլընտրանքային ֆինանսավորման		ԷՆ	Շարունակելի	Էկոնոմիկայի նախարարության կողմից կատարվել է ներդրում Ամբեր Կապիտալ մասնավոր ներդրումային ֆոնդում 7 մլն դոլարի չափով:
1.4.7	Վենչուրային հիմնադրամների և բիզնես-հրեշտակների հետ շարունակական կապի պահպանում իրենց աշխատանքը ակտիվացնելու նպատակով. այդ թվում՝	Վենչուրային հիմնադրամների պորտֆել	ԲՏԱՆ, ԷՆ	Շարունակական	ԵՄ-ուղեղիշների շրջանակներում մշակվել և ԵՄ հետ բանակցություններ են վարվում այլընտրանքային ներդրումների հասանելիության բարձրացման ծրագրի շրջանակներում, որով նախատեսվում է կենսաթոշակային հիմնադրամների մասնակցությամբ կամ որակյալ կառավարիչներ ունեցող ֆոնդերի կողմից իրականացված ներդրումների մասով երաշխիքների տրամադրում՝ համամասնակցային՝ 50/50 սկզբունքով, 1 միավոր մասնավոր կապիտալի ներդրման դեպքում համարժեք պետական կապիտալի ներդրում (50/50 matching):
1.5.2	Մասնակցություն սնանկության կառավարիչների մոտիվացիոն այնպիսի մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, որոնք շահագրգռում են ՓՄՁ սնանկության վարույթը ավարտել	Արտադատական գործընթացների կշիռը ընդհանուրի մեջ	ԷՆ	Դեկտեմբեր 2022	Կառավարության 2022 թվականի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության Նպատակ 8-ի՝ սնանկության ռնիվերսալ օրենսդրության մշակման արդյունք է սահմանվել. 1.1 «Սնանկության բոլոր ընթացակարգային և նյութական ասպեկտները կարգավորվել են մեկ միասնական իրավական ակտով, որով լուծվել են սնանկության ոլորտի իրավակիրառ պրակտիկայում բացահայտված խնդիրների առնվազն 70 տոկոսը» 1.4 «Ֆինանսական առողջացումների դեպքերի թիվը ավելացել է շուրջ 10 տոկոսով», և 1.5 «Գործում են սնանկության առնվազն 3 հատուկ ընթացակարգեր՝ առանձին սուբյեկտների և անդրսահմանային սնանկության համար» կետերը

2.1.2	Տեխնոլոգիական խորհրդատվության և առդիտի (այդ թվում միջազգային փորձագետների միջոցով) ծրագրի մշակում և ներդնում	Շահառուների քանակ	ԷՆ		Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է Կառավարության 2020 թվականի 355-Լ, որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը, որի շրջանակներում նախատեսվում է կազմակերպությունների արտադրողականության աճի և/կամ կլիմայական դիմակայունության բարձրացման նպատակով ներգրավված փորձագետների կամ խորհրդատվական կազմակերպությունների վճարի սուբսիդավորում: Նախագիծը ներկայումս գտնվում է Կառավարության հետ քննարկման փուլում:
2.2.1	Ներդնել Բիզնես Աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունների և Բիզնես Ասոցիացիների հետ համագործակցության պլատֆորմ,	Փոխշահավետ պլատֆորմ	ԷՆ	Մարտ 2022	2022 թվականին Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվել է Պետություն-մասնավոր երկխոսության նախաձեռնման, երկխոսության հարթակների ձևավորման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է Գործարար միությունների և բիզնես ասոցիացիաների պետություն-մասնավոր երկխոսության հարթակներում ակտիվ ներգրավման, այդ թվում պարբերաբար հանդիպումների և քննարկումների կազմակերպում՝ գործարար համայնքի խնդիրները վերհանելու և արձանագրելու համար:
2.3.2	Աշխատուժի կարողությունների գնահատում և բացերի վերհանում, վերապատրաստման կարիքների գնահատում		SDG lab, ԷՆ, GIZ	2022	GIZ-ի հետ համատեղ ալկոհոլային խմիչքների արտադրողների և տեքստիլ ոլորտի կազմակերպությունների հետ կազմակերպվել են հանդիպումներ, որոնց շրջանակներում DACUM տեխնիկայով վեր են հանվել մասնավոր հատվածի համար անհրաժեշտ աշխատուժի մասնագիտական կարողությունները: Արենի խոշորացված համայնքում ներդրվել է նշված գնահատման հիման վրա մշակված դուալ կրթական ծրագիրը: Ներկայումս գտնվում ենք արդյունքների գնահատման փուլում:
2.3.3	Կրթական/վերապատրաստման ծրագրերի կազմում համաձայն կարիքների		SDG lab, ԿԳՄՄՆ, ԷՆ	2022	Մշակվել է Մասնագիտական կարողությունների զարգացման միջոցառումը, որի շրջանակներում է նախատեսվում է փոխհատուցել ՀՀ եկամտային հարկ վճարող քաղաքացիների կողմից որոշման չափորոշիչներին համապատասխան դասընթացների մասնակցության վճարի 70%-ը:
2.3.4	ՄԿՈՒ կրթական ծրագրերի մշակման գործընթացում մասնավոր հատվածի հետ քննարկումների կազմակերպում		SDG lab, ԿԳՄՄՆ, ԷՆ	2022	2022 թվականին պարբերաբար իրականացվել են նմանատիպ քննարկումներ, ՄԿՈՒ ԶԱԽ-ի խորհրդի նիստերի ընթացքում, որոնց մասնակցել է նաև ԷՆ նախարարի տեղակալը: Քննարկումները իրականացվել են նաև մշակող արդյունաբերության տարբեր ենթաճյուղերի ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքները ներառվել են ոլորտային ռազմավարությունների մեջ:
2.3.5	Հասանելի, ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում		ԷՆ	Շարունակական	Միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացները շարունակական ներկայացվում են վարչության համակարգմամբ իրականացվող ծրագրերի մասնակիցներին և այլ ՓՄՁ սուբյեկտների՝ ըստ անհրաժեշտության և համապատասխանության:
2.3.7	Առցանց հայալեզու ուսուցողական գործիքների մշակում և տարածում	Ուսուցողական նյութերի քանակ	ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և կառավարություն է ներկայացվել «Մասնագիտական կարողությունների զարգացման» միջոցառումը (2020 թվականի 355-Լ, որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագծի 3-րդ հավելված): Ներկայումս բանակցություններ են վարվում EdTech հայալեզու ուսուցողական համակարգի ստեղծմանն ուղղված:
2.3.10	Ներդնել ՓՄՁ աշխատակիցների մասնագիտական կարողությունների վերապատրաստումների համաֆինանսավորման ծրագիր	Շահառուների քանակ	ԷՆ	Մարտ 2022	Մշակվել, շրջանառվել և կառավարություն է ներկայացվել Մասնագիտական կարողությունների զարգացման միջոցառումը, որի շրջանակներում է նախատեսվում է փոխհատուցել ՀՀ եկամտային հարկ վճարող քաղաքացիների կողմից որոշման չափորոշիչներին համապատասխան դասընթացների մասնակցության վճարի 70%-ը (2020 թվականի 355-Լ, որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագծի 3-րդ հավելված): Նախագիծը գտնվում է համաձայնեցման փուլում:
2.3.11	Մենթորշիփներ, փորձի փոխանակման թրեյնինգներ ՀՀ բոլոր մարզերում	Թրեյնինգների ու մենթորշիփների թիվ	ԷՆ	Դեկտեմբեր 2022	2022 թվականին ՄԱԶԾ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագիր է իրականացվել Աքսելերատոր N5 ծրագրի, որի նպատակն է կանանց տնտեսական ներուժի ակտիվացումն ու ամբողջական ներդրումը տնտեսության մեջ: • Բաղադրիչ 1. Աշխատուժի ավելի բարձր արտադրողականության ապահովման նպատակով կանանց ձեռներեցությանը և գբաղունակությանն ուղղված աքսելերատոր (էկոհամակարգի մակարդակում գործող աջակցության մեխանիզմ) է հիմնվել՝ «Աքսելերատոր 5. Կանանց տնտեսական զորացման ազգային հարթակ»: • Բաղադրիչ 2. Փորձարարության հիման վրա կանայք օգտվում են զբաղունակության և ձեռներեցության աջակցության բարդ մեխանիզմից, այդ թվում՝ ձեռք բերելով գործարարության և թվային հարթակներից օգտվելու հմտություններ և ստանալով ֆինանսական աջակցություն, ինչի շնորհիվ հասանելիություն կստանան/կկարողանան հարմարվել COVID-19-ի համատեքստում փոփոխվող շուկաներին: Ծրագրի pre-accelerator-ին միացել են 221 մասնակիցներ-սկսնակ ձեռներեցներ, իսկ accelerator-ին 54 մասնակիցներ:
2.4.2	ՓՄՁ-ների SS և թվային վերափոխման ծրագրերի տեխնիկական աջակցություն (համաֆինանսավորում) պետական աջակցության կառույցների միջոցով	Թվային լուծումների անցած ՓՄՁ-ների թիվ	ԲՏԱՆ և ԷՆ	Շարունակական	2022 թվականի ընթացքում մշակվել է ՓՄՁ թվայնացման հայեցակարգը, որի հիման վրա մշակվել, շրջանառվել և կառավարություն է ներկայացվել տնտեսական արդիականացման միջոցառումը ընդարձակելու նախագիծը, որի շրջանակներում առաջարկվել է սուբսիդավորել թվային հարթակների ձեռքբերմանը ուղղված վարկեր (2020 թվականի 355-Լ, որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագծ): Նախագիծը գտնվում է փոխվարչապետի հետ համաձայնեցման փուլում: EU4digital ծրագրի շրջանակներում կատարվել են աշխատանքներ 2022թ-ին Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության կողմից: 2023 թվականին նույն ծրագրի շրջանակներում առցանց ձևաչափով հանդիպում է կազմակերպվել ՓՄՁ-երի համար՝ էլեկտրոնային առևտրի հարթակներից (amazon, ebay, alibaba) օգտվելու տեխնիկական օժանդակության նպատակով:
2.5.1	Կրթական համակարգի բոլոր օղակներում ձեռնարկատիրության էլեմենտների/առարկաների ուսուցման ծրագրերի մշակում	Ծրագրերի քանակ	ԿԳՄՄՆ, ԿԲ, ԷՆ	Դեկտեմբեր 2022	Հանրակրթության պետական չափորոշչով միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով ամրագրված են այնպիսի գիտելիքներ, հմտություններ, ինչպիսիք են՝ ճանաչի, նկարագրի ձեռնարկատիրական գործունեության տեսակներ, թվարկի բիզնես և աշխատանքային էթիկայի հիմնական նորմերը, բացատրի դրանց պահպանման անհրաժեշտությունը հաջողված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Վերջնարդյունքները ապահովելու նպատակով մշակվել են առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, որոնցում ինտեգրված բաղադրիչներ են ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությունը: 2021-2022 ուստարում ծրագրերը փորձարկվում են Տավուշի մարզի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում: Առարկաների ծրագրերը կազմվում են ըստ իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի ուղղվածության՝ պահպանելով Չափորոշչի պահանջները: Առարկայի ծրագրերի հիման վրա սահմանված կարգով մշակվում են թեմատիկ և անհատական ուսուցման պլաններ, ստեղծվում են դասագրքեր, ուսուցչի ձեռնարկներ և այլ ուսումնական նյութեր: Կարևորելով երիտասարդների մոտ ձեռնարկատիրական մտածողության, ձեռներեցության կարողությունների զարգացումը, ստեղծագործական և նորարարական հմտությունների խթանումը՝ վերանայվող և նոր մշակվող չափորոշիչներում, ինչպես նաև ՄԿՈՒ բոլոր հաստատությունների ուսումնական պլաններում 2017-2018 թվականներից սկսված ներառվել և ուսուցանվում է «Ձեռներեցություն» մոդուլը: ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներում ընդգրկված «Ձեռներեցություն» մոդուլի համար մշակվել է երեք ձեռնարկ՝ ուսումնական և մանկավարժների ու սովորողների համար: «Ձեռներեցություն» մոդուլը դասավանդող 25 մանկավարժներ անցել են դասընթացավարների վերապատրաստում, որոնցից 1-ին փուլում 11 դասընթացավար ստացել են դասընթացավարների վերապատրաստում իրականացնելու հավաստագիր: 2019-2022 թվականներին վերապատրաստումներ են կազմակերպվել «Ձեռներեցություն» մոդուլի շուրջ 290 դասընթացավարների համար, ներառյալ՝ «Ձեռներեցություն» մոդուլի առցանց ուսուցման գործիքակազմով իրականացման համար: 2020թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) հետ համագործակցության շրջանակում ստեղծված http://elearning.am/login/index.php?lang=hy էլեկտրոնային հարթակում կազմակերպվել են «Ձեռներեցություն» մոդուլի վերաբերյալ առցանց դասընթացներ: Ներկայումս ՀՀ բոլոր նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդումն իրականացվում է մշակված մոդուլի ու ձեռնարկների կիրառմամբ՝ վերապատրաստված մանկավարժների կողմից:
2.5.2	ԲՈՒՀ-երի ոչ տնտեսագիտական/կառավարման ֆակուլտետներում "Բիզնեսի հիմունքների" լրացուցիչ ընտրովի դասընթացի ներդնում	Մշակված և ներդրված դասընթացներ	ԿԳՄՄՆ, ԷՆ	Դեկտեմբեր 2022	Կետի իրականացման համար պատասխանատու է ԿԳՄՄՆ-ն, Էկոնոմիկային նախարարության կողմից աշխատանքներ չեն իրականացվել:

2.5.3	Դպրոցական և ուսանողական ճամբարների անցկացում	Ճամբար	ԿԳՄՍՆ, ԷՆ	Շարունակական	ՀՀ կառավարության 08.07.2021թ N 1126-Ն որոշման հիման վրա 2 հերթափոխով (յուրաքանչյուր հերթափոխի տևողությունը 20 օր) զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 3200 երեխաների համար կազմակերպվել և իրականացվել է ամառային հանգիստ: 11-րդ դասարաններում սովորող դպրոցականների մոտ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից ստացած գիտելիքների հարստացման և դրանց համապատասխան կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով 2021 թվականին թվով 95 դպրոցականների համար կազմակերպվել է ռազմամարզական ճամբար:
2.5.5	Համագործակցություն ԲՈՒՀ-երի բիզնես-ինկուբատորների հետ՝ տեխնիկական և ֆինանսական օժանդակության հնարավորությունները դուրս բերելու նպատակով		ԿԳՄՍՆ, ԲՏԱՆ և ԷՆ	Շարունակական	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում առաջիկայում նախատեսվում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում 4 տեխնոլոգիական լաբորատորիայի բացում՝ դոնոր կազմակերպության հովանավորությամբ: Ներկայումս մշակվել է ՓՄՁ աջակցության նոր, համապարփակ աջակցության ծրագիր՝ 3 բաղադրիչով. - ՓՄՁ ինկուբացիոն ծրագրի ֆինանսավորում - արտոնյալ վարկավորման տրամադրում - ՖԿ-ների հետ ստեղծել հովհանոցային երաշխիքի գործիք
2.5.7	Թիրախային կրթական ծրագրերի իրականացում կանանց, երիտասարդների և հայրենադարձների համար	Ծրագրերի քանակ	ԷՆ	Շարունակական	2022 թվականին ՄԱԶԾ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ ծրագիր է իրականացվել Աքսելերատոր N5 ծրագրի, որի նպատակն է, որ կանայք կդառնան ավելի դիմակայուն և հույսն ավելի շատ կդնեն սեփական ուժերի վրա՝ էկոհամակարգի մակարդակում նորարար աջակցության մեխանիզմների շնորհիվ, որոնք կօգնեն հաղթահարել գործունակության և ձեռներեցության բարդ մարտահրավերները: • Բաղադրիչ 1. Աշխատուժի ավելի բարձր արտադրողականության ապահովման նպատակով կանանց ձեռներեցությանը և զբաղունակությանն ուղղված աքսելերատոր (էկոհամակարգի մակարդակում գործող աջակցության մեխանիզմ) է հիմնվել՝ «Աքսելերատոր 5. Կանանց տնտեսական զորացման ազգային հարթակ»: • Բաղադրիչ 2. Փորձարարության հիման վրա կանայք օգտվում են զբաղունակության և ձեռներեցության աջակցության բարդ մեխանիզմից, այդ թվում՝ ձեռք բերելով գործարարության և թվային հարթակներից օգտվելու հմտություններ և ստանալով ֆինանսական աջակցություն, ինչի շնորհիվ հասանելիություն կստանան/կկարողանան հարմարվել COVID-19-ի համատեքստում փոփոխվող շուկաներին:Ծրագրի pre-accelerator-ին միացել են 221 մասնակիցներ-սկսնակ ձեռներեցներ, իսկ accelerator-ին 54 մասնակիցներ:
2.6.2	Հաղորդակցման հասանելի հարթակներով ներկայացնել ՍՁ հաջողակ պատմություններ, դրա հիմքում ընկած գաղափարախոսությամբ	Պատրաստված և հեռուս-տա-տե-սու-թյամբ թողարկված տեսանյութեր	ԱՍՀՆ, ԷՆ	Շարունակական	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն Արցախի Հանրապետության կառավարության հետ՝ «Սոցիալական Ձեռներեցների դպրոց»-ի և Գավառի պետական համալսարանի «Յունուս կենտրոն»-ի միջոցով 2021 թվականի օգոստոսի 28-ից Արցախի Հանրապետությունում անցկացվել է Սոցիալական ձեռնարկատիրական շաբաթ: Ծրագրի շրջանակում «Սոցիալական ձեռնարկատիրությունը՝ որպես Արցախի համայնքային զարգացման նոր բիզնես մոդել» խորագրով դասընթացներ են իրականացվել ինչպես մասնակիցների անմիջական ներկայությամբ, այնպես էլ՝ առցանց ձևաչափով: Դասընթացների արդյունքում մասնակիցները ձեռք են բերել նոր հմտություններ, իսկ սոցիալական ձեռնարկատիրական լավագույն բիզնես գաղափարները՝ ֆինանսավորում: Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1443-Լ որոշման Հավելված N 2-ի Ռազմավարության գործողությունների պլանի 2.6.2 կետի՝ գործընթացը լուսաբանվել է և՛ նախարարության պաշտոնական կայքէջով, և՛ ՀԼՄ-ներով:
2.6.3	Իրականացնել ՍՁ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման ծրագիր	Ծրագրերի քանակ	ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության և Impact Hub Yerevan-ի միջև շարունակական աշխատանքներ են տարվում Սոցիալական ձեռնարկատիրության հայեցակարգի մշակման ուղղությամբ, որից հետո հնարավոր կլինի իրականացնել ՍՁ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման ծրագիր:
3.1.1	Իրականացնել ՓՄՁ-ների իրազեկության մակարդակի բարձրացման միջոցառումներ ԵԱՏՄ, GSP+, REX համակարգերի, ինչպես նաև մաքսային ընթացակարգերի լավագույն կիրառման վերաբերյալ	Համակարգերից օգտվող արտահանող ՓՄՁ-ների թիվ	ԷՆ	Շարունակական	2022 թվականի հունվարի 1-ից Եվրոմիության կողմից ՀՀ-ին տրամադրված GSP+ նորացված արտոնյալ առևտրային ռեժիմը դադարել է գործելուց, հետևապես չի գործել նաև այդ նպատակով հիմնված REX ապրանքների ծագման ինքնահավաստման էլեկտրոնային համակարգը: Ի լրումն ՀՀ-ն շարունակում է օգտվել Ամերիկայի, Կանադայի, Շվեյցարիայի, Նորվեգիա, Ճապոնիայի կողմից տրամադրվող GSP արտոնյալ առևտրային համակարգերից: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են բազմաթիվ քննարկումներ արտահանողների հետ, որի ընթացքում գործարարները իրազեկվել են տվյալ փոփոխությունների մասին: Այնուամենայնիվ ՀՀ-ի արտադրողներ իրենց ապրանքների արտահանման մասով շարունակվում են օգտվել Ամերիկայի, Կանադայի, Շվեյցարիայի, Նորվեգիա, Ճապոնիայի կողմից տրամադրվող GSP արտոնյալ առևտրային համակարգերից: Եվրոմիության կողմից 2023 թվականին Էկոնոմիկայի նախարարությունում ԱՄՆ առևտրի դեպարտամենտի հետ քննարկել են տնտեսության ոլորտում հայ-ամերիկյան համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ ընդհանրացված նախապատվությունների համակարգի (GSP) միջոցով ԱՄՆ ապրանքների արտահանումը:
3.1.4	Արտահանման առավել մեծ ներուժ ունեցող ոլորտների ՓՄՁ-ի հետ իրականացնել իրազեկման թիրախային և ավելի մանրակրկիտ աշխատանքներ	Կազմակերպված քննարկումների թիվ/քննարկում-ներին ներգրավված ՓՄՁ-ների թիվ	ԷՆ	Շարունակական	«Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողով 2022 թվականի սեպտեմբերի 22-24-ը «Տեքստիլ Ալյանս Հայաստան-Իտալիա» գործարար համաժողովը իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: Համաժողովին մասնակցել են տեքստիլ արդյունաբերության ոլորտի 7 կազմակերպություններ: Համաժողովի ընթացքում. - տեղի են ունեցել B2B հանդիպումներ ոլորտի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են սեփական բիզնեսը ընդլայնելու հնարավորությունները, հումք Հայաստան ներկրելու հնարավոր տարբերակները և գործարարներին հետաքրքրող այլ հարցեր, - տեղի են ունեցել գործնական քննարկումներ իտալացի և Իտալիայում բնակվող ազգությամբ հայ թեթև արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչ գործարարների հետ, - տեղի են ունեցել հանդիպումներ մտավոր սեփականության հարցերով զբաղվող թիմի հետ՝ բրենդի գրանցումը և միջազգային հարթակներում բրենդի անխափան ներկայությունը ապահովելու նպատակով:
3.1.6	Իրականացնել թիրախային շուկաներում ընտրված ապրանքների/ծառայությունների պահանջարկի վերլուծություններ և ապահովել դրանցում տեղ գտած բիզնես հնարավորությունների ներկայացումը ՓՄՁ հասանելի	Վերլուծություն-ների առկայություն	ԷՆ	Մարտ 2022	Տեքստիլ արդյունաբերության ոլորտի ռազմավարության ինչպես նաև կահույքի, կաշվի և կոշիկի ռազմավարությունների մշակման շրջանակներում իրականացվել է թիրախային շուկաներում ընտրված ապրանքների և ծառայությունների պահանջարկի վերլուծություն: Նշված աշխատանքները ներկայացվել են ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին:
3.2.1	Խթանել cosme և ԵԱՏՄ առևտրային համակարգերի կիրառությունը ՓՄՁ-ները շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով	Իրազեկման գործողություններ	ԷՆ	Շարունակական	Չի կատարվել՝ ԵՄ կողմից COSME ծրագրի դադարեցման արդյունքում: Ներկայումս տարվում են բանակցություններ, նոր՝ Single Market Program ծրագրին անդամակցելու ուղղությամբ:
3.2.2	Միջազգային առևտրային հարթակներում ՓՄՁ-ների ներկայացվածության տեխնիկական աջակցություն		ԷՆ	Շարունակական	2022 թվականին առցանց ձևաչափով կազմակերպվել է Wildberries առևտրային հարթակում ապրանքների ներկայացվածության վերաբերյալ դասընթաց: Միաժամանակ, Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ համագործակցություն ծրագիր է սկսվել Amazon առևտրային հարթակի հետ: Նախատեսվում է պիլոտային ծրագիր իրականացնել տեքստիլի, կոշիկի և կաշվի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների ներգրավվածությամբ, որի շրջանակներում կիրականացվի խորհրդատվություն՝ Amazon և Wallmart առևտրային հարթակներում ՓՄՁ-երի ներկայացվածության վերաբերյալ, ինչպես նաև կկատարվի ծախսերի մասնակի փոխհատուցում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Գրադուս կազմակերպության հետ համատեղ:
3.3.2	Բացահայտել արտադրանքի համար պոտենցիալ շուկաներ մուտքի հետ կապված առկա խոչընդոտները և աջակցել հավաստագրերի ստացմանը:		ԷՆ	Շարունակական	2022 թվականից մեկնարկել է ՀՀ արտահանման պոտենցիալի գնահատման միջոցառումը: Գնահատման առաջին փուլը ավարտվել է 2023 թվականի ապրիլին, ինչի կապակցությամբ ԷՆ-ում կազմակերպվել է մասնավոր և փորձագիտական հանձնաժողովի հետ քննարկում: Նախատեսվում է մինչև 2023 թվականի հունիս ամիսը ավարտել ամբողջական աշխատանքը, ինչի հիման վրա կմշակվեն համապատասխան աջակցության գործիքները:

3.5.2	Ապահովել միջազգային առցանց վճարային համակարգերի հասանելիությունը (օր.՝ PayPal)		ԿԲ, ԷՆ, ԲՏԱՆ, ԱԳՆ	Հունիս 2022	PayPal կողմից մեր տարածաշրջանում գործունեության ծավալման մասով հետաքրքրվածությունը բացակայում է: 2021 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը ևս մեկ անգամ դիմել է տարածաշրջանում PayPal-ի ներկայացուցչությանը՝ վերահաստատելով ՀՀ պատրաստակամությունը ներգրավելու վերջինիս ՀՀ շուկայում: PayPal-ի ներկայացուցիչները խնդրել են որոշակի ժամանակ՝ ևս մեկ անգամ քննարկելու ՀՀ շուկա մուտքի հետ կապված նպատակահարմարության հարցը: Ներկայումս հարցը ներառված է Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ռազմավարական երկխոսության մեջ: Ներկայումս ՀՀ կենտրոնական բանկի կողմից աշխատանքներ են տարվում այլ միջազգային վճարային համակարգերի ներգրավման ուղղությամբ: Այդ աշխատանքների արդյունքում 2022 թվականի հունվարի 18-ից ՀՀ-ում հասանելի են Apple Pay ծառայությունները:
3.5.6	Տեխնիկական աջակցություն միջազգային առևտրի հարթակներում ներկայացվելու համար		ԷՆ	Շարունակական	2022 թվականին առցանց ձևաչափով կազմակերպվել է Wildberries առևտրային հարթակում ապրանքների ներկայացվածության վերաբերյալ դասընթաց: Միաժամանակ, Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ համագործակցություն ծրագիր է սկսվել Amazon առևտրային հարթակի հետ: Նախատեսվում է պիլոտային ծրագիր իրականացնել տեքստիլի, կոշիկի և կաշվի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների ներգրավվածությամբ, որի շրջանակներում կիրականացվի խորհրդատվություն՝ Amazon և Wallmart առևտրային հարթակներում ՓՄՁ-երի ներկայացվածության վերաբերյալ, ինչպես նաև կկատարվի ծախսերի մասնակի փոխհատուցում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Գրադուս կազմակերպության հետ համատեղ:
4.1.2	Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շուրջ կլոր սեղան-քննարկումների, հարցումների և հանրային քննարկումների կազմակերպում		ԷՆ	Շարունակական	2022 թվականին կազմակերպվել է 6 ՓՄՁ ենթախորհրդի նիստ:
4.2.2	Իրականացնել պետական աջակցության կառույցի հանրության հետ հաղորդակցման/իրազեկման ծրագիր	Ծածկույթ	ԷՆ	Շարունակական	Չի կատարվել, քանի որ ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող կազմակերպության կառուցվածքում փոփոխություններ են կատարվել: Միաժամանակ, Կառավարության 2021 թվականի 1902-Լ, որոշման Հավելված 2-ով հաստատված Էկոնոմիկայի նախարարության 4.1 կետով նախատեսվում է ՀՀ բոլոր մարզերում ունենալ ձեռներեցության և նորարարության աջակցության կենտրոն, որտեղ կլինեն բիզնես խորհրդատվական ծառայություններ, կլինեն տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակներ, կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր վերապատրաստումներ, կլինեն նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Սույն միջոցառման իրականացման նպատակով մշակվել, շրջանառվել և կառավարություն է ներկայացվել նոր կառույցի ստեղծման համապատասխան նախագիծը և հիմնավորումները: Հայեցակարգային մոտեցումների մասին մի քանի քննարկում է կատարվել փոխվարչապետ Հ. Մաթևոսյանի և Տ. Խաչատրյանի գլխավորությամբ: Առաջիկա քննարկումը նախատեսվում է անել Վարչապետի գլխավորությամբ:
4.2.5	ՓՄՁ աջակցություն իրականացնող մասնավոր նախաձեռնությունների քարտեզագրում և պետական աջակցության իրականացում տեղեկատվության տարածման, վերլուծական նյութերի տրամադրման և [illegible]	Մասնավորների քարտեզագրում	ԷՆ	Շարունակական	2022 թվականին Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվել և իրականացվել է նախարարության համակարգմամբ իրականացվող ծրագրերի հանրային իրազեկման վերաբերյալ միջոցառումների շարքը, որի շրջանակներում օգտագործվել են թե՛ թվային մարքեթինգային գործիքներ, թե՛ ավանդական մարքեթինգային գործիքներ:
4.2.7	Իրականացնել ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող մարզային կառույցների կարողությունների գնահատում և դրա հիման վրա կազմակերպել անհրաժեշտ դասընթացներ	Գնահատման արդյունքներ Դասընթացների քանակ	ԷՆ	Շարունակական	Չի կատարվել, քանի որ ՓՄՁ աջակցության ծրագրեր իրականացնող կազմակերպության կառուցվածքում փոփոխություններ են կատարվել: Միաժամանակ, Կառավարության 2021 թվականի 1902-Լ, որոշման Հավելված 2-ով հաստատված Էկոնոմիկայի նախարարության 4.1 կետով նախատեսվում է ՀՀ բոլոր մարզերում ունենալ ձեռներեցության և նորարարության աջակցության կենտրոն, որտեղ կլինեն բիզնես խորհրդատվական ծառայություններ, կլինեն տեխնոլոգիաների տրանսֆերի գրասենյակներ, կանցկացվեն բիզնես ինկուբացիոն ծրագրեր վերապատրաստումներ, կլինեն նորաստեղծ կամ փոքր ընկերությունների համար հարմարավետ գրասենյակային վարձակալման պայմաններ: Սույն միջոցառման իրականացման նպատակով մշակվել, շրջանառվել և կառավարություն է ներկայացվել նոր կառույցի ստեղծման համապատասխան նախագիծը և հիմնավորումները: Հայեցակարգային մոտեցումների մասին մի քանի քննարկում է կատարվել փոխվարչապետ Հ. Մաթևոսյանի և Տ. Խաչատրյանի գլխավորությամբ: Առաջիկա քննարկումը նախատեսվում է անել Վարչապետի գլխավորությամբ:
4.3.2	Հարկային գաղտնիք չպարունակող տեղեկատվության փոխանակման մեթոդի,կառուցվածքի ու բովանդակության քննարկում և համաձայնություն ՊԵԿ և ԷՆ միջև: Համաձայնեցված տարբերակով տեղեկատվության փոխանակման [illegible]		ԷՆ, ՊԵԿ	Հունվար 2022	Էկոնոմիկայի նախարարության կողմից 2022 թվականի ընթացքում կազմակերպվել մի քանի քննարկում ՊԵԿ գործընկերների հետ: Քննարկումների արդյունքում ՊԵԿ-ը ԷՆ-ը տրամադրում անհրաժեշտ Business Intelligence հաշվետվությունը: Այն պարունակում է անհրաժեշտ տեղեկատվության հիմնական հատվածը, իսկ առանձին դեպքերում կատարվում են համապատասխան հարցումներ ՊԵԿ-ին և անհրաժեշտ տեղեկատվությունը տրվում է ԷՆ-ին: Նաև հրապարակվել է Էկոնոմիկայի նախարարության Ձեռներեցության վարչության կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն, որտեղ առկա է ընդհանրական վերլուծական տեղեկատվություն աջակցության ծրագրերի շահառուների վերաբերյալ, ընդ որում այդ տեղեկատվությունը հարկային գաղտնիք չի պարունակում: Միաժամանակ, նախատեսվում է որոշակի պարբերականությամբ վերլուծական տեղեկատվություն հրապարակել Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:
4.3.4	Բարելավել ՓՄՁ-ի բիզնես որոշումներին առնչվող դեմոգրաֆիական և տնտեսական ցուցանիշների վիճակագրական տվյալների մատչելիությունը և որակը		ՎԿ	Մարտ 2022	ՎԿ-ն, առաջնորդվելով ՓՄՁ ոլորտի միջազգային վիճակագրական պրակտիկայում կիրառվող, այն է՝ Եվրոստատի ու ՏՀԶԿ-ի կողմից ընդունված չափորոշիչներով, ՓՄՁ տնտեսական ու դեմոգրաֆիական ցուցանիշները՝ համապատասխան մեթոդաբանական պարզաբանումներով՝ ներառյալ դրանց միջազգային մեթոդաբանությանը հղումները, տարեկան պարբերականությամբ հրապարակում է ՎԿ-ի պաշտոնական կայքում՝ այդպիսով ապահովելով խնդրո առարկա տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը՝ տարաբնույթ սպառողների համար: Մասնավորապես, այդ ցուցանիշներին են վերաբերում ՓՄՁ-ների քանակը, շրջանառությունը, վարձու աշխատողների թվաքանակը, միջին աշխատավարձը, ավելացված արժեքը, բիզնես-դեմոգրաֆիական ցուցանիշները (նոր ստեղծված, լուծարված/մահացած և այլն)՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների չափերի, Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ խմբ.2-ի) բաժինների և ՀՀ մարզային/Երևան քաղաքի բաշխվածության (տե՛ս օրինակ 2021թ.-ի Տեղեկագրի համապատասխան բաժինները): ՓՄՁ տնտեսական ցուցանիշների բարելավման մասով ՎԿ-ն, ի լրումն նախկինում հրապարակվող ցուցանիշների, հաշվի առնելով ՏՀԶԿ-ի և այլ սպառողների կողմից ներկայացված առաջարկությունները ու պայմանավորված համապատասխան տեղեկատվական աղբյուրների առկայությամբ, սկսած 2021թ.-ից, ՓՄՁ-ի կողմից ստեղծված ավելացված արժեքի ցուցանիշը տարանջատել է նաև ըստ գերփոքր ու փոքր տնտեսվարողների (տես՝ 2021թ.- Տեղեկագրի 19-27 էջերը), ինչը նախկինում մշակվում էր միավորված խմբով (տես օրինակ. 2020թ.-ի Տեղեկագիրը՝ https://armstat.am/file/article/sme__bul_2020_arm.pdf հղմամբ): Բացի այդ, նշված հրապարակման «ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսավարողների կողմից ստեղծված համախառն ավելացված արժեքը» 7-րդ բաժնում ավելացվել են ՓՄՁ-ի կողմից ստեղծված ավելացված արժեքը, դրա կառուցվածքն ըստ ոլորտների, ինչպես նաև ՀՆԱ-ում ավելացված արժեքի մասնաբաժինը նկարագրող թվով 3 նոր տեղեկատվական աղյուսակներ և 1 գծապատկեր: Ինչ վերաբերում է ՓՄՁ ցուցանիշների որակին, ապա դրա ապահովումը ՎԿ-ի կողմից իրականացվող շարունակական գործընթաց է, որի համար ՎԿ-ն մշտապես համագործակցում է վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների (ռեսպոնդենտների) ու վարչական ռեգիստր վարող մարմինների հետ՝ ցուցանիշների ամբողջականության, արդիականության և ճշգրտության ապահովման նպատակով: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՓՄՁ վիճակագրության վարման նպատակով կիրառվող ուղղակի (վիճակագրական) և անուղղակի (վարչական, մասնավորապես՝ ՊԵԿ-ի) տեղեկատվական աղբյուրներից հավաքվող/ստացվող տեղեկատվության հարաբերակցությունը կազմում է 15 և 85 %: Հետևաբար՝ նշված վիճակագրության որակի ապահովումը հիմնականում պայմանավորված է վարչական աղբյուրում պահվող տեղեկատվության որակով: Այնուամենայնիվ, ՎԿ-ն, այդ թվում նշված վիճակագրության վարման նպատակով մշտապես իրականացնում է տարբեր աղբյուրներից հավաքված/ստացված տեղեկատվության (օրինակ. Տնտեսական գործունեության տեսակներ, շրջանառություն, աշխատողների թվաքանակ և այլն) համադրումներ՝ դրանցում բացահայտված տարբերությունները պարզաբանելու և ճշգրտելու, ռեսպոնդենտներին/հարկ վճարողներին մեթոդաբանական պարզաբանումներ ներկայացնելու և այդպիսով հավաքվող/ստացվող տեղեկատվության որակը բարելավելու ուղղությամբ:
4.4.3	Գործող ծրագրերին ՓՄՁ-ների ուղղորդման մատչելի մեխանիզմի ներդրում	Կայքի հետ սինխրոնիզացիա	ԷՆ	Շարունակական	2022 թվականին Էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնվել և իրականացվել է նախարարության համակարգմամբ իրականացվող ծրագրերի հանրային իրազեկման վերաբերյալ միջոցառումների շարքը, որի շրջանակներում օգտագործվել են թե՛ թվային մարքեթինգային գործիքներ, թե՛ ավանդական մարքեթինգային գործիքներ:

4.5.1	Ներդնել ֆորմալ ձևաչափ օրենսդրական նախաձեռնությունների ՓՄՁ թեստավորման ապահովման համար		ԷՆ	Շարունակական	Գործում է կարգավորման ազդեցության գնահատման ընդունված ընթացակարգը՝ համաձայն 2020 թվականի N 2075-Ն որոշման:
4.5.2	ՓՄՁ-ին առնչվող բոլոր իրավական ակտերի ստեղծման և փոփոխությունների հետ կապված կազմակերպել հանրային քննություններ		ԷՆ	Շարունակական	Օրենսդրական լուծումներ պահանջող իրավական ակտերը պարտադիր կերպով տեղադրվում են edraft կայքում:
4.6.1	ՓՄՁ-ի կողմից բարձրաձայնված խնդիրների օրենսդրական լուծումների մշակում		ԷՆ	Շարունակական	Էկոնոմիկայի նախարարության կողմից պետություն-մասնավոր երկխոսության շրջանակներում ՓՄՁ խորհրդի կողմից բարձրաձայնված խնդիրներին տրվում են օրենսդրական լուծումներ, որոնք սահմանված ընթացակարգով շրջանառվել և ներկայացվում են կառավարություն: Ենթախորհրդի նիստերը իրականացվել են ամսեկան կտրվածքով: